ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հեղափոխությունը սկսվեց Պետրոգրադում, 1905 թ. հունվարի 9(22)-ի սովորական կիրակի օրը, որը դարձավ XX դարի ամենաարյունալի օրերից մեկը։ Հունվարի 9-ով սկսվում էր ժողովրդական լայն զանգվածների՝ ինքնակալության դեմ ուղղված կազմակերպված կռիվը, որին վիճակված էր լինելու իմպերիալիզմի դարաշրջանի առաջին ժողովրդական հեղափոխությունը։

XIX դարի վերջին, XX դարի սկզբին Ռուսաստանում կապիտալիզմը թևակոխել էր իր զարգացման վերջին՝ իմպերիալիստական փուլը։ Այդ պայմաններում ինքնակալությունը՝ որպես ճորտատիրական կարգերի մնացուկ, որպես կալվածատիրական հողատիրության պաշտպան, արգելակում էր երկրի հասարակական զարգացումը։ Բնական է, որ ստեղծված իրավիճակում դասակարգային պայքարը պետք է առավել սուր բնույթ կրեր։ Վ. Ի. Լենինը նշել է, որ Ռուսաստանում «...իմպերիալիզմը միահյուսված էր մինչկապիտալիստական հարաբերությունների առանձնապես խիտ ցանցով»[1]։ Դա նախ և առաջ կալվածատիրական հողատիրության առկայությունն էր երկրում, որը ցարական ինքնակալության գլխավորությամբ հասարակական հետամնացության գլխավոր պատճառն էր, պրոլետարիատի և գյուղացիության նկատմամբ կիրառվող ճնշման բարբարոսական մեթոդների աղբյուրը։ Ահա թե ինչու, Վ. Ի. Լենինի բառերով ասած, «հեղափոխության մեխը» կալվածատիրական հողասեփականության վերացումն էր, որով պայմանավորված էր Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության կարևոր առանձնահատկություններից մեկը։ Ռուսական առաջին հեղափոխության բուրժուա-դեմոկրատական բնույթը պայմանավորված էր նաև նրանով, որ հեղափոխության մերձավոր խնդիրներն էին՝ միապետության խորտակումը, դեմոկրատական հանրապետության հաստատումն ու ութժամյա բանվորական օրը։ Այդ խնդիրների լիակատար հեղափոխական կենսագործման համար պայքարի էին ելել ժողովրդի ամենալայն խավերը, ճնշվող և հալածվող բոլոր հասարակական շերտերը, ազգային-ազատագրական շարժման առաջադեմ ուժերը։ Այստեղից էլ իր բնույթով բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը միաժամանակ իսկական ժողովրդական հեղափոխություն էր։ Վ. Ի. Լենինն ասում էր, թե խոր քնի մեջ նիրհած Ռուսաստանը «վեր էր ածվել հեղափոխական պրոլետարիատի և հեղափոխական ժողովրդի Ռուսաստանի»[2]։

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի երկրներում տեղի ունեցած բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների, 1905—1907 թթ. ռուսական հե-

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 27, էջ 378։
2 Նույն տեղում, հատ. 30, էջ 310։

դափոխության գլխավոր շարժիչ ուժն ու հեգեմոնը պրոլետարիատն էր։ Բուրժուազիան, որ նախընթաց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների ժամանակ հանդես էր եկել որպես աճող և առաջադեմ դասակարգ, այժմ ապրում էր իր անկումը, դարձել էր պատմականորեն հետադեմ դասակարգ։ Մինչդեռ Ռուսաստանի պրոլետարիատը ժամանակի ամենաառաջադեմ, մինչև վերջ հեղափոխական դասակարգն էր և հանդես էր գալիս որպես սկսված նոր դարաշրջանի հեղափոխական շարժման առաջատար ուժ։ Նրան գլխավորում էր և պայքարի առաջնորդում Վ. Ի. Լենինի ստեղծած բոլշևիկների կուսակցությունը։ Մտնելով ժողովրդական հեղափոխության մեջ, Ռուսաստանի բանվոր դասակարգը բերում էր դասակարգային պայքարի երեք ձևերը՝ տնտեսականը, քաղաքականն ու գաղափարականը։ Գործարաններում, ֆաբրիկաներում, հանքերում և երկաթուղում բռնկված տնտեսական և քաղաքական գործադուլները բանվորական պայքարի այնպիսի միջոցներն էին, որոնցում բանվորների դըլխավորությամբ ներգրավվում էին հասարակության բոլոր առաջադիմական խավերը։ Գործադուլը, այսպիսով, ինքնակալության դեմ ժողովրդական լայն մասսաների մղած պայքարի հզոր միջոց էր՝ իր կիրառման տնտեսական և քաղաքական տարբեր ձևերով, ծավալման տարբեր մասշտաբներով, մինչև պինված ապստամբության վերաճելու լայն հնարավորություններով։ Ռուսական առաջին հեղափոխությունը իր պայքարի միջոցների տեսակետից պրոլետարական հեղափոխություն էր։

Բայց այսքանով չի սպառվում հեղափոխության բնութագիրը։ Ճորտատիրության գլխավոր մնացուկի՝ ցարիզմի և ընդհանրապես կալվածատիրական հողատիրության դեմ մղվող պայքարով խորապես շահագրգռված էր ամբողջ գյուղացիությունը, որը հանդես էր գալիս որպես պրոլետարիատի դաշնակից։ Ագրարային հարցը հեղափոխության կենտրոնական հարցն էր, իսկ գյուղացիությունը նրա շարժիչ ուժերից մեկը։

Մենշևիկները չցանկացան ըմբռնել սոցիալ-տնտեսական զարգացման այն օբյեկտիվ օրինաչափությունները, որոնց շնորհիվ Ռուսաստանում բռնկված՝ իմպերիալիզմի դարաշրջանի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը տարբերվում էր Արևմուտքի երկրներում մինչ այդ տեղի ունեցած բուրժուական հեղափոխություններից։ Այդ պատճառով էլ նրանք պնդում էին, որ առաջվա պես բուրժուազիան պետք է հանդես գա հեղափոխության հեգեմոնի դերում, իսկ պրոլետարիատը պետք է աջակցի նրան։ Մինչդեռ պրոլետարիատը արդեն ընթանում էր հեղափոխության առջևից, որպես նրա հեգեմոն, գյուղացիությունը դաշնակցում էր նրա հետ, իսկ բուրժուազիան, դառնալով ռեակցիոն ուժ, ցարի հետ գործարքի միջոցներ էր որոնում՝ պրոլետարիատին ու նրա ետևից ընթացող գյուղացիական մասսաներին հեղափոխության ուղուց շեղելու, նրանց պայքարը ճնշելու համար։

«Արյունոտ կիրակիին» Պետերբուրգի պրոլետարիատը նույն օրը ևեթ պատասխանեց գործադուլով, որը շուտով ստացավ համընդհանուր բնույթ, ընդգրկելով Մոսկվան, Ռիգան, Լոձը, Բաքուն, Կիևը, Օդեսան, Խարկովը և երկրի բազմաթիվ այլ քաղաքներ։ Հեղափոխության առաջին երեք ամսում գործադուլներին մասնակցեց մոտ մեկ միլիոն մարդ։ Այդ նույն ժամանակամիջոցում գյուղացիական հուզումներ տեղի ունեցան երկրի բազմաթիվ կենտրոնական ու ծայրամասային նահանգներում։ Բայց ո՛չ գործադուլները, ո՛չ էլ գյուղա-

ցիական հուզումները այլևս սովորական գործադուլներ ու հուզումներ չէին. Նախ, նրանցում անհամեմատ բարձր էին տնտեսական պահանջները, ապա՝ տնտեսականի հետ մեկտեղ առաջ էին քաշվում քաղաքական պահանջներ։ Վերջապես, որպես կանոն, բանվորներն ու գյուղացիները այժմ ավելի համառ էին, հետևողական ու աննահանջ։ Քիչ չէր պատահում, որ ելույթից առաջ ապստամբները մտածում էին նաև ցարական ոստիկանության հնարավոր զինված գրոհից պատշաճ ձևով պաշտպանվելու, կամ թե հարկ եղած դեպքում՝ իրենց տնտեսական ու քաղաքական պայքարը ցարիզմի դեմ զինված գրոհի վերածելու մասին։ Այդ տեսակետից պատմականորեն նշանակալից է Լոձի պրոլետարիատի 1905 թ. հունիսի ապստամբությունը, որը ցարիզմի դեմ բանվորների առաջին զինված ելույթն էր Ռուսաստանում.

Հեղափոխության պատմության մեջ կարևոր փուլեր էին 1905 թ. համառուսաստանյան հոկտեմբերյան քաղաքական գործադուլը և դեկտեմբերյան հայտնի զինված ապստամբությունը։ Առաջինից ահաբեկված ցարը հրաչտակեց Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, ժողովրդին խոստանալով «ազատություն և սահմանադրություն»։ Այս փաստաթուղթը առաջ բերեց դասակարգերի և քաղաքական կուսակցությունների տարբեր և իրարամերժ վերաբերմունքը։ Էսեռներն ու մենշևիկները համոզմունք հայտնեցին, թե ցարական մանիֆեստով Ռուսաստանը կանգնում է զարգացման բուրժուա-դեմոկրատական ուղու վրա։ Լիբերալ բուրժուազիան նույնպես իրեն լիովին բավարարված էր զգում այդ մանիֆեստով։ Խոշոր արդյունաբերական կապիտալի և խոշոր կալվածատիրության ներկայացուցիչները մանիֆեստի նկատմամբ իրենց բերկրանքը արտահայտեցին նրանով, որ ձևավորեցին «Հոկտեմբերի 17-ի միություն» կուսակցությունը (Օկտյաբրիստներ)։ Բուրժուական ինտելիգենցիան և լիբերալ կալվածատիրությունը, միմյանց հետ գործարք կնքելով, նույն 1905-ի հոկտեմբերին ստեղծեցին կադետական կուսակցությունը, որը դարձավ Ռուսաստանի գլխավոր բուրժուական կուսակցությունը։

Բոլշևիկները բացատրում էին, որ ցարը և նրա կառավարությունը կեղծում են։ Նրանք պրոլետարիատին կոչ էին անում զենք վերցնել, զենքով նվաճել իսկական ազատությունը և առաջ տանել հեղափոխությունը մինչև իր հաղթական վախճանը։

Դեկտեմբերին Մոսկվայում բռնկված զինված ապստամբությունը հեղափոխության գագաթնակետն էր։ Բանվորները բարիկադների վրա կենաց և մահու կռիվ մղեցին ցարական կանոնավոր զորքերի դեմ։ Ինն օր շարունակ պրոլետարիատը դիմադրում էր։ Չնայած իր պարտությանը, դեկտեմբերյան զինված ապստամբությունը հերոսության օրինակ ծառայեց երկրի բոլոր վայրերի բանվորների և գյուղացիության համար, որը անհավասար պայքարի էր դուրս եկել կալվածատերերի դեմ։

Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո հեղափոխությունն սպրեց իր վայրէջքը։ Չնայած դրան 1906 և 1907 թթ. երկրի տարբեր մասերում շարունակվում էին բանվորական գործադուլներն ու գյուղացիական ապստամբությունները։ Բոլշևիկների կուսակցությունը մշակեց կազմակերպված նահանջի տակտիկա և ապահովեց կուսակցական կազմակերպությունների պահպանումը՝ սկսված ռեակցիայի ծանր պայմաններում։

1905—1907 թթ. հեղափոխության պարտությամբ պրոլետարիատի քաղաքական պայքարի պատմական վերընթացը չդադարեց։ Ռուսաստանի բան-

վորներն ու գյուղացիները ձեռք բերեցին հեղափոխական պայքարի մեծ փորձ. հետագայում խորապես հաշվի առան հեղափոխության դասերը։ Տասներկու տարի հետո, Ռուսաստանի պրոլետարիատը շքավորագույն գյուղացիության հետ դաշնակցած, իրականացրեց սոցիալիստական հեղափոխության պատմական հաղթանակը։

1905—1907 թթ. հեղափոխությունը միջազգային մեծ նշանակություն ունեցավ։ Նա բացահայտեց պրոլետարիատի հեղափոխական ստեղծագործության անսպառ հնարավորությունները, ցույց տվեց գյուղացիության և մյուս դեմոկրատական ուժերի նկատմամբ բանվոր դասակարգի հեգեմոն դերի վրճռական նշանակությունը իմպերիալիզմի դարաշրջանի դեմոկրատական շարժումների հաղթանակի ապահովման մեջ։ Հեղափոխության ընթացքում ծնունդ առան սովետները, որոնք պատմական ասպարեզ գալով բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ընդերքում, դարձան պրոլետարիատի քաղաքական իշխանության օրգաններ։ Սովետները պրոլետարիատի քաղաքական ստեղծագործության արդյունքն էին, նրա հեղափոխական կռվի արգասիքը։

Հունվարի 9-ի դեպքերը և երկրի արդյունաբերական խոշոր կենտրոնների հեղափոխական իրադարձությունները անմիջապես իրենց արձագանքները գտան նաև Հայաստանում։ Դրա վառ արտահայտություններից մեկը Ալավերդու բանվորների 1905 թ. մարտին սկսված գործադուլն էր, որը տևեց գրեթե մի ամբողջ ամիս։ Բանը հասավ բանվորների և կազակային ջոկատների միջև ընկնված ընդհարման։ Գործադուլ արին նաև երկաթուղու Լոռու և Փամբակի հատվածի բանվորները։ Հայաստանի երկաթուղու բանվորները իրենց գործադուլով արձագանքեցին նաև 1905 թ. հոկտեմբերյան համառուսաստանյան ընդհանուր գործադուլին։ Սանահինի դեպոյում ստեղծվեց երկաթուղային բանվորների գործադուլային կոմիտե, որը փաստորեն կատարում էր բանվորական դեպուտատների սովետի ֆունկցիաներ։ 1905 թ. նոյեմբերին սկսվեց Ալավերդու բանվորների քաղաքական գործադուլը։ Բանվորները ընտրեցին գործադուլային կոմիտե և գործարանի վարչությանը ներկայացրին իրենց պահանջները։ Գործարանային վարչությունը ստիպված եղավ կատարել դրանց մի մասը։ Լոռին 1905—1907 թթ. դարձավ ցարիզմի դեմ ընդվզման օջախ, ուր դրսևորվեց պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դաշինքը։ Այն ժամանակ, երբ Ալավերդու գործարանի և հանքերի բանվորները իրենց գործադուլով հանդես էին եկել սեփականատեր Պոլմարի դեմ, Հաղբատ, Աքորի. Սանահին, Ուզունլար, Որնակ և մյուս գյուղերի գյուղացիները օգտագործում էին իշխաններ Լորիս-Մելիքովի և Բարաթովի կալվածատիրական հողերը, որով փաստորեն իրականացնում էին հողերի բռնագրավման վերաբերյալ հեղափոխական պահանջը[3]։ Սրանք հայ ժողովրդի հեղափոխական պայքարի պատմության կարևոր դրվագներ են, որոնք Հայաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դասակարգային հատունության ապացույցներ են։ Ելնելով կալվածատերերի ու ցարական ստրաժնիկների դեմ, հայ բանվորները ցույց էին տալիս իրենց ինքնուրույն քաղաքական ուժ դառնալու, որպես

---

3 Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908 թթ.), Երևան, 1957։

առանձին դասակարգ ձևավորվելու փաստը։ Չմոռանանք, որ Ալավերդու հանքերում և գործարաններում աշխատող բանվորների թիվը այդ ժամանակ հասնում էր 4500-ի։

Փաստերի ուսումնասիրությունից հստակորեն երևում է, որ ինչպես Լոռու բանվորների, այնպես էլ գյուղացիների պայքարը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բնույթ էր կրում։ Դրա լավագույն ապացույցը բանվորների հիմնած գործադուլային կոմիտեն էր, իսկ գյուղերում՝ գյուղական կոմիտեների ստեղծումը, ըստ որում թե՛ մեկը, թե՛ մյուսը աշխատավորների հեղափոխական պայքարի ընտրովի օրգաններ էին։

1906 թ. օգոստոսին Ալավերդում գարձյալ բանվորների մասսայական գործադուլ սկսվեց։ Սա ըստ էության տեղական և կենտրոնական իշխանությունների դեմ ուղղված բանվորական ապստամբություն էր, որը համադրրկովկասյան նշանակություն ուներ։ Բանվորներին տեղում օգնություն ցույց տալու, նրանց պայքարը կազմակերպելու համար Ալավերդի են գալիս բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչներ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։

1905—1907 թթ. Հայաստանում գործադուլները մասսայական բնույթ էին կրում։ Նրանք ընդգրկեցին արտադրության բոլոր բնագավառները։ Գործադուլներ արեցին Հայաստանով անցնող երկաթգծի բոլոր կայարանների, Երևանի կաշվի, գինու-կոնյակի գործարանների բանվորները, դարբնոցների, փականագործական արհեստանոցների և քաղաքի մի շարք արհեստանոցների, ճաշարանների, բաղնիքների, ձիաքարշի, քաղաքային և մերձքաղաքային այգիների վարձու բանվորներն ու տնային ծառաները։ Ալեքսանդրապոլում հայտնի են երկաթուղային բանվորների, կոշիկի արհեստանոցների, բաղնիքների վարձու աշխատողների, պայտարների, դերձակների, պետական հիմնարկների ծառայողների (դրագիրներ և այլն) գործադուլները։ Գործադուլային շարժմանը շատ ակտիվորեն էին մասնակցում Երևանի և Ալեքսանդրապոլի տպարանների բանվորները։ Հայտնի են Ղարաքիլիսայի և Ջալալօղլու կոշիկի արհեստանոցների բանվորների ու աշակերտների, Ղարաքիլիսայի, Նոր Բայազետի, Սարիղամիշի մանր ձեռնարկությունների աշխատավորների, պետական հիմնարկների ծառայողների մի շարք գործադուլներ։ Ցարիզմի դեմ իրենց տնտեսական ու քաղաքական պահանջներն են ներկայացնում առաջադեմ հայ ուսանողությունն ու Հայաստանի դպրոցների բարձր դասարանների աշակերտությունը։ Տպավորիչ էին մասնավորապես Երևանի թեմական դպրոցի և արական դիմնազիայի աշակերտության հեղափոխական ելույթները։ Ինքնակալության դեմ ելույթ ունեցավ Հայաստանի կայազորի հեղափոխական դինվորությունը։

1905—1907 թթ. հեղափոխության տարեգրության մեջ առանձնապես նշանակալից է Ղափանի լեռնա-հանքային արդյունաբերական բանվորների 1907 թ. հզոր ելույթը, որը ինքնակալության դեմ պայքարի կարևոր էջերից մեկն էր հեղափոխության վայրէջքի ժամանակաշրջանում։

Լոռու գյուղացիության հեղափոխական ելույթներից բացի հայտնի են նաև Երևանի նահանգի Արազդայան գյուղի, էջմիածնի գավառի, Սևանի ավազանի, Ալեքսանդրապոլի և այլ գավառների մի շարք գյուղերի գյուղացիական ելույթ-

ները։ Գյուղացիների պայքարի ձևերն էին՝ կալվածատիրական, երբեմն նաև վանքապատկան, ինչպես նաև այլ խոշոր սեփականատիրական հողերի բռնագրավումները, հարկի զանազան ձևերից հրաժարվելը, անտառները կտրելը, անցյալ պարտքերը չմուծելը և այլն։

Գործադուլային շարժմանը, տնտեսական և քաղաքական պահանջներով հանդերձ, մեծ եռանդով մասնակցում էին Կարսի աշխատավորները։ Կուսակցության կենտրոնական օրգան «Пролетарий» թերթը Օդեսայի, Խարկովի, Լոձի, Եկատերինոսլավի հետ մեկտեղ նշում էր նաև Կարսի հացթուխների գործադուլի մասին։ ՌՍԴԲԿ Կարսի բջիջը հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կապակցությամբ հանդես եկավ հատուկ կոչով, որով մերկացնում էր ցարի խաբեբայությունը և պաշտոնական «ազատություններ» հակադրում էր իսկական, պրոլետարական ազատությունը, վերջինիս համար զինված դայքարի հրավիրելով հեղափոխության մարտիկներին։ Նույնպիսի կոչերով հանդես եկան նաև Ալեքսանդրապոլի և Երևանի բոլշևիկները։

Հեղափոխությանը որևէ ձևով մասնակցելու ամեն մի փորձ իր վրա էր բևեռում ոչ միայն տեղական, այլև անդրկովկասյան ու կենտրոնական իշխանությունների ուշադրությունը։ Ներքին գործերի մինիստրության ոստիկանական վարչության հատուկ բաժնի կովկասյան ներկայացուցչությունը իր պետերբուրգյան ղեկավարությանը մանրամասն տեղեկություններ էր հղում գործադուլների մասին և պահանջում էր կենտրոնի ցուցումը։ Այդ գրությունները իրենց հերթին ապացուցում են Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի մեծ ազդեցությունը Հայաստանի աշխատավորների վրա։ Կովկասի ոստիկանական վարչությունը իր մայրաքաղաքային ղեկավարությանը մի շարք անգամներ ահազանգել է, օրինակ, Երևանի դինու-կոնյակի և կաշվի գործարանների բանվորների գործադուլների և տերերին նրանց ներկայացրած հեղափոխական պահանջների մասին։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններն էլ ավելի ամրապնդեցին իրենց շարքերը և ընդարձակեցին իրենց գործունեությունը։ Մի շարք վայրերում առաջ եկան բոլշևիկյան նոր կազմակերպություններ և խմբակներ։ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Ալավերդու, Հաղբատի և մյուս վայրերի բոլշևիկյան կազմակերպությունների շուրջը համախմբվում էին քաղաքի և գյուղի աշխատավորների նորանոր զանգվածներ։ Նրանք կազմակերպում են գործադուլներ, բաց են թողնում թռուցիկներ, իրենց բանավոր և գրավոր պրոպագանդայով պաշտպանում են ազգային և սոցիալական ազատագրության խնդիրների սերտ միասնությունը իմպերիալիզմի օրոք աշխատավորության ծավալած հեղափոխական շարժումների մեջ։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը մոտիկից մեծ օգնություն և ղեկավարություն էր ցույց տալիս Վ. Ի. Լենինի հավատարիմ գինակից Ստեփան Շահումյանը։ Այդ տարիներին նա այցելել է Երևան և Երևանի նահանգի մի շարք շրջաններն ու գյուղերը, եղել է Ալավերդում, Հաղբատում, Լոռու մյուս գյուղերում։ Երևանում նա մասնակցել է բոլշևիկյան կազմակերպության ժողովներին, այցելել է կաշվի գործարանների և քաղաքի մյուս արտադրական օջախների բանվորներին, ճառով հանդես է եկել բանվորական միտինգում։ Ս. Սպանդարյանի հետ միասին Ստ. Շահումյանը խոշոր աշխատանք է ծավալել Ալավերդու բանվորների

գործադուլային շարժումը կազմակերպելու ուղղությամբ, լայն բացատրական աշխատանք է տարել Լոռու աշխատավոր գյուղացիության մեջ։

Հեղափոխության տարիներին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ամրապնդում են իրենց կապերը ՌՍԴԲԿ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների, այնտեղ գործող ականավոր բոլշևիկների հետ, կապեր են հաստատում կուսակցության կենտրոնական մարմինների հետ։ Հայաստանի բոլշևիկները եռանդուն մասնակցություն են ունենում հեղափոխության տարիներին տեղի ունեցած բոլշևիկյան համակուսակցական երեք համագումարների (III, IV, V) նախապատրաստմանն ու ընդունած բոլշևիկյան որոշումների կենսագործմանը։ ՌՍԴԲԿ IV (Միավորիչ) համագումարին Երևանի կազմակերպությունից պատվիրակ էր Ստ. Շահումյանը, ՌՍԴԲԿ V համագումարին Բորչալուի կազմակերպությունից պատվիրակ էին Ստ. Շահումյանը և Ասատուր Կախոյանը, իսկ Երևանի կազմակերպությունից՝ Գեորգի Սոկոլովսկին։

Հեղափոխության տարիներին տեղի ունեցած համակուսակցական համագումարներից ամեն մեկը կարևոր պատմական իրադարձություն էր կուսակցության և երկրի հեղափոխական ուժերի, բոլոր առաջադիմական խավերի կյանքում։ ՌՍԴԲԿ III համագումարը (1905 թ. ապրիլ-մայիս) մշակեց կուսակցության ստրատեգիական պլանը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ։ Այդ պլանը հանգում էր այն բանին, որ կուսակցությունը պետք է գլխավորեր պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը, չեզոքացներ լիբերալ բուրժուազիային և, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը հասցնելով իր հաղթական ավարտին, հող նախապատրաստեր նրա՝ սոցիալիստական հեղափոխության վերաճելու համար։ Համագումարի այդ որոշումները իրենց հանճարեղ հիմնավորումը գտան Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությունում, որը լույս տեսավ համագումարից երկու ամիս անց։ Նրանում Վ. Ի. Լենինը տեսականորեն մշակեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու հստակ պլանը, սոցիալիստական հեղափոխության մարքսիստական տեսությունը զարգացրեց իմպերիալիզմի պայմաններին համապատասխան։

ՌՍԴԲԿ IV համագումարի (1906 թ. ապրիլ-մայիս) քննարկած կենտրոնական հարցերից մեկը կուսակցության ագրարային ծրագրի վերանայումն էր։ Հայտնի է, որ ՌՍԴԲԿ II համագումարի ընդունած ագրարային ծրագրում հիմնական պահանջը 1861 թ. ռեֆորմով գյուղացիներից կալվածատերերի օգտին խլված հողերի («օտրեզկաների») վերադարձն էր գյուղացիությանը։ Բայց այժմ, գյուղացիության բուռն հեղափոխական պայքարի պայմաններում, երբ, անկախ որևէ որոշումից, տեղերում գյուղացիները բռնագրավում էին կալվածատիրական հողերը, այլևս սոսկ «օտրեզկաների» վերադարձը չէր կարող բավարարել գյուղացիական լայն մասսաների պահանջները։ Ուստի բոլշևիկները համագումարում առաջ են քաշում կալվածատիրական, եկեղեցական, վանքապատկան, ուդելային, պետական և կաբինետային բոլոր հողերի բռնագրավումը։ Բռնագրավված այդ հողերը պետք է դրվեին ընտրովի գյուղացիական կոմիտեների տրամադրության տակ, որոնք և պետք է պայքարեին կալվածատիրական հողատիրության մնացուկները իսպառ վերացնելու համար։ Բայց եթե հեղափոխության հաղթանակի դեպքում հաստատվեր դեմոկրատական հան-

բապետություն և ստեղծվեր հեղափոխական-դեմոկրատական կառավարություն, ապա այդ դեպքում ենթադրվում էր բոլոր հողերի ազգայնացումը և դրանք պետությանը որպես սեփականություն հանձնելը։ Սա արդեն կյանքի թելադրանքն էր, որ լիովին համապատասխանում էր գյուղացիության հեղափոխական թափին, ամբողջ երկրով մեկ ծավալված հեղափոխության բնույթին։

Մենշևիկները դեմ դուրս եկան բոլշևիկների մարքսիստական-լենինյան ագրարային ծրագրին։ Նրանք առաջ քաշեցին հողերի մունիցիպալացման մանր բուրժուական պահանջը։ Այդ նշանակում էր հողի մի մասի նկատմամբ պահպանել մասնավոր սեփականությունը, իսկ կալվածատիրական հողերը հանձնել տեղական ինքնավարության օրգանների տնօրինությանը։ Գյուղացիությունը պետք է վճարեր տեղական ինքնավարության օրգանների տնօրինության տակ գտնվող հողերից օգտվելու համար։ Սա ռեֆորմիստական, այլ ոչ թե հեղափոխական պահանջ էր, դրա հիմքում ընկած էր կալվածատիրական հողերի ոչ թե բռնագրավումը, այլ օտարումը, որը սերտորեն կապված էր կալվածատիրական հողերը ետ գնելու մասին լիբերալ-բուրժուական (կադետական) ծրագրի հետ։

Վ. Ի. Լենինը նոր իմաստ ու բովանդակություն էր դնում հողի ազգայնացման տրադիցիոն հասկացության մեջ։ Հայտնի է, որ ուտոպիստ սոցիալիստները, հետագայում նաև ռուս նարոդնիկները այն համարում էին սոցիալիստական միջոցառում, որը, ըստ նրանց պատկերացման, պետք է սոցիալիզմին անցնելու վճռական միջոց ծառայեր։ Մինչդեռ Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ քանի դեռ սոցիալական հեղափոխությունը մինչև վերջ չի հասցված, հողի ազգայնացումը դեռևս ողջ մասնավոր սեփականության վերացումը չէ, որ դա նույնիսկ չի նշանակում մասնավոր սեփականության վերացում գյուղատնտեսության մեջ։ Պետականացված հողի վրա դեռևս կարող էր ծաղկել մասնավոր տնտեսությունը, իսկ բացարձակ ռենտան երեկվա մասնավոր սեփականատիրոջից այսուհետև տրվում է պետությանը։ Այդուհանդերձ, որպես ամենից ավելի հետևողական բուրժուա-դեմոկրատական պահանջ, բոլշևիկները հողի ազգայնացումը համարում էին այն միջոցը, որը իսպառ կվերացներ ֆեոդալական, կալվածատիրական հողատիրությունը, և դրա մեջ էր հենց հողի ազգայնացման պահանջի առաջադիմական տնտեսական նշանակությունը։ Սրելով և խորացնելով դասակարգային պայքարը գյուղում, հողի ազգայնացումը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության կատարյալ հաղթանակի դեպքում ըստ էության վիթխարի հարված կհասցներ արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը և դրանով իսկ կնշանակեր կարևոր առաջընթաց դեպի հեղափոխության հաջորդ՝ սոցիալիստական փուլը։ Սակայն համագումարում մենշևիկների ունեցած թվական մեծամասնությունը նպաստեց այն բանին, որ ընդունվեց հողերի մունիցիպալացման պահանջը։ Չնայած դրան, համագումարում տարած մեծ աշխատանքի շնորհիվ բոլշևիկները կարողացան նրանում կարևոր փոփոխություններ մտցնել։ Կալվածատիրական հողերի օտարման մենշևիկյան պահանջի վրա խարեն համագումարը ընդունեց բռնագրավման սկզբունքը, որով բոլշևիկները արտահայտում էին հեղափոխության մեջ ներգրավված միլիոնավոր գյուղացիական մասսաների արմատական շահերը։

Մենշևիկները գտնում էին, որ գյուղացիությունը զուրկ է հեղափոխական պայքարի ընդունակություններից։ Սրանք գյուղացիությանը դիտում էին որ-

պես ռեակցիոն, միապետականորեն տրամադրված սարը։ Դրա համար էլ ամեն կերպ ըմբոստանում էին գյուղացիության՝ որպես հեղափոխության շարժիչ ուժի բոլշևիկյան գնահատականի դեմ։ Գյուղացիության հեղափոխական հնարավորությունների գնահատման հարցում մենշևիկները հետևում էին բացարձակ օպորտունիստական, հակահեղափոխական տակտիկայի։

ՌՍԴԲԿ V համագումարը (1907 թ. մայիս-հունիս) հաստատեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի և նրա կուսակցության ստրատեգիայի ու տակտիկայի լենինյան սկզբունքները։ Համագումարի բանաձևերում անց էր կացվում այն դաղափարը, որ Ռուսաստանի պրոլետարիատը հանդես է գալիս որպես ինքնուրույն քաղաքական ուժ և նրա պատմական պարտքն է գլխավորել գյուղացիության, հասարակության բոլոր դեմոկրատական, առաջադիմական խավերի պայքարը ընդդեմ ցարիզմի, ընդդեմ ցարի հետ գործարք կնքած լիբերալ բուրժուազիայի։

Կուսակցական համագումարներում բոլշևիկները տեսականորեն ընդհանրացնում էին պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական պայքարի փորձը, բացահայտում էին իմպերիալիզմի օրոք ժողովրդական հեղափոխության ընդհանուր օրինաչափություններն ու դրսևորման յուրօրինակությունները։ Դրանով իսկ 1905—1907 թթ. հեղափոխությունը ստանում էր միջազգային մեծ նշանակություն։

Հեղափոխության պատմության մեջ մեծ տեղ է պատկանում բոլշևիկյան մամուլին։ Այդ ընթացքում լույս տեսան ութ անուն կենտրոնական թերթեր, մի շարք թերթեր հրապարակեցին Պետերբուրգի, Մոսկվայի և երկրի բազմաթիվ այլ քաղաքների բոլշևիկյան կազմակերպությունները։ Բոլշևիկյան լրագրերը կոչված էին ոչ միայն նկարագրելու, լուսաբանելու հեղափոխական դեպքերի ընթացքը, այլև գործնական օգնություն ցույց տալու բարիկադների վրա կռվող մարտիկներին, կատարելու կազմակերպչի պարտականություն։ «Ղեկավարել կուսակցությանը շարժման այժմյան վիթխարի, չտեսնված աճման պայմաններում կարելի է միմիայն մամուլի միջոցով»,— գրել է Վ. Ի. Լենինը 1905 թ.[4]։ Բոլշևիկյան լրագրերում բազմաթիվ հոդվածներ, լուրեր և այլ նյութեր էին լույս տեսնում նաև Անդրկովկասի աշխատավորների կյանքի ու պայքարի վերաբերյալ։ Միայն 1905 թ. լույս տեսած «Вперед», «Пролетарий» և «Новая жизнь» բոլշևիկյան կենտրոնական օրգաններում Անդրկովկասի վերաբերյալ լույս տեսած նյութերը կազմում են մի ստվար հատոր։ Նրանցում տրված է Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի, սոցիալ-տնտեսական կյանքի գիտական վերլուծությունը, երկրամասի աշխատավորների պայքարի ճշգրիտ գնահատականը։ Դրանով իսկ գործնական օգնություն և ղեկավարություն էր ցույց տրվում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին։ Երկրամասի բազմազգ աշխատավորները կուսակցության կենտրոնական օրգանների միջոցով ստանում էին իրենց հեղափոխական պայքարի ճիշտ կողմնորոշումը։ Իսկ կուսակցության օրգանները շեշտը դնում էին բանվորների և բոլոր աշխատավորների պայքարի ինտերնացիոնալ համերաշխության վրա, ցարիզմի խորտակման կարևոր պայման համարելով Պետերբուր-

---

4 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 414։

գի և Մոսկվայի, ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի հետ Անդրկովկասի վրացի, հայ, ադրբեջանցի և մյուս բոլոր ազգերի աշխատավորների հեղափոխական միասնությունը։ Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի, Երևանի, Քութաիսի, Ալեքսանդրապոլի, Ալավերդու, Զափանի աշխատավորների հեղափոխական ոգևշնչման մեծ օրինակ էր ծառայում Պետերբուրգի և Մոսկվայի պրոլետարիատի անձնազոհ կռիվը։ Երկու մայրաքաղաքների բանվորները համառուսաստանյան պրոլետարիատի առաջավոր ջոկատներն էին, որոնց պայքարը ուներ խոր ինտերնացիոնալիստական բովանդակություն։ Ինքնակալության խորտակման հետ մեկտեղ նրանք առաջ էին քաշում երկրի բոլոր ազգերի աշխատավորների ազգային ազատագրության լոզունգները։ Հետևելով Ռուսաստանի պրոլետարիատի օրինակին, Կովկասի աշխատավորները ստանում էին ինտերնացիոնալիզմի մեծ դասեր և իրենց հերթին նոր էջեր էին գրում բազմազգ աշխատավորների համատեղ հեղափոխական պայքարի հերոսական տարեգրության մեջ։

1905—1907 թթ. հեղափոխության ընթացքում ղգալիորեն հարստացավ կովկասյան հեղափոխական մամուլը։ Լույս տեսան վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն մի շարք բոլշևիկյան թերթեր, որոնք խոշոր դեր խաղացին Անդրկովկասի քաղաքական կյանքի մարքսիստական-լենինյան վերլուծության, երկրամասի աշխատավորների ինտերնացիոնալ համերաշխությունը կռելու, նրանց համատեղ հեղափոխական պայքարը կազմակերպելու գործում։ Պատմականորեն նշանակալից է «Պրոլետարիատի կռիվը», «Բանվորի ձայնը», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Կոչ-դևվեթ» բոլշևիկյան թերթերի հրապարակ գալն ու գործունեությունը։ Մամուլի այդ օրգանների լայն գործունեությամբ ինքնակալության դեմ ուղղված ժողովրդական հեղափոխության բովում ձևավորվում և զարգանում էր մարքսիստական-լենինյան հայ հասարակական-քաղաքական միտքը։ Նրանցում տպագրվել են Վ. Ի. Լենինի մի շարք հոդվածներն ու աշխատությունները, այդ թվում՝ «Երրորդ համագումարի որոշումը՝ Կովկասում պատահած անցքերի մասին»[5], «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները»[6], «ՌՍԴԲԿ կուսակցության երկու տակտիկան պետական դումայի վերաբերյալ»[7], «Նոր վերելք»[8] և այլն։

Հայ բոլշևիկյան հրապարակախոսության ասպարեզում մեծ են Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի և մյուս ականավոր լենինյանների ծառայությունները։ Նրանք են ստեղծել և խմբագրել հայերեն առաջին մարքսիստական բոլշևիկյան լրագրերը և իրենք էլ մամուլի էջերում հրապարակել են հայերեն առաջին մարքսիստական ծրագրային փաստաթղթերը, բազմաթիվ առաջատար հոդվածներ։ Ուշագրավ երևույթ էր 1907 թ. Երևանում բոլշևիկների նախաձեռնությամբ ռուսերեն «Факты» թերթի լույս-ընծայումը։ Խմբագիրը Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար գործիչ Գեորգի Սոկոլովսկին էր։

1905—1907 թթ. հեղափոխությունը ասպարեզ հանեց հայ մարքսիստ հրապարակախոսների ու պրոպագանդիստների մի ամբողջ փայլուն սերունդ։

---

5 Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», 1905, № 6։
6 Տե՛ս նույն տեղում, 1905, № 7։
7 Տե՛ս «Բանվորի ձայնը», 1906, № 1։
8 Տե՛ս «Կայծ», 1906, № 14։

Նրանց ականավոր ներկայացուցիչներից են նաև Ալ. Բեկզադյանը, Մ. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Ա. Մռավյանը և շատ ուրիշներ։

1905—1907 թթ. համառուսաստանյան և հայկական իրականության ընձեռած հսկայական նյութի հիման վրա հայ լենինյանները գիտական պատասխան տվեցին մեր ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության ուղիների և միջոցների հարցին։ Այդ հարցը լուծվեց հօգուտ ազգայինի նկատմամբ սոցիալականի առաջնայնության, պրոլետարիատի դասակարգային ազատագրության մեջ տեսնելով նաև ժողովրդի ազգային ազատագրության իղձերի իրականացումը։ Հայ հասարակական մտքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հայ լենինյանների ստեղծագործ աշխատանքը ազգայինի և միջազգայինի փոխադարձ կապի ու փոխպայմանավորվածության պրոբլեմի խոր լուսաբանման ուղղությամբ։

Ժամանակի կարևոր պատմական փաստաթղթերից են նաև հայերեն բոլշևիկյան թռուցիկները ու թերթիկները։ Հեղափոխության տարիներին դրանց թիվը անցնում է հարյուրից։ Դրանք հեղափոխական մտքի խտացումն են, որոնք ներկայացնում են հայաստանյան, համաանդրկովկասյան և համառուսաստանյան կյանքի կարևոր իրադարձությունների գնահատականը՝ պրոլետարիատի ու նրա մարքսիստական կուսակցության տեսանկյունից։ Դրանով իսկ այդ փաստաթղթերում, յուրովի, կոնկրետ երևույթների վերլուծման ու գնահատման միջոցով տրված է մարքսիզմը իր ամբողջության մեջ կիրառելու օրինակը։

1905—1907 թթ. հեղափոխությունը ուժգին հարված էր իմպերիալիզմի համաշխարհային սիստեմին։ Հեղափոխությունը ոտքի հանեց ոչ միայն զարգացած կապիտալիստական երկրների պրոլետարիատին, այլև իմպերիալիզմի գաղութային լծի տակ գտնվող ազատատենչ ժողովուրդներին։ Հեղափոխության ընթացքը էլ ավելի որոշակի ցույց տվեց, որ Ռուսաստանը դարձել է համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնը, իսկ Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատը հանդես է գալիս իմպերիալիզմի դարաշրջանի հեղափոխական ուժերի ավանգարդում։ Այդ պատմական իրողությունները իրենց հետագա հաստատումն ու զարգացումը գտան Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի փաստի մեջ։ Սկսելով և առաջ տանելով սոցիալիզմի կառուցման մեծ գործը, Սովետական Միության բանվորները ու գյուղացիները, Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, բացեցին մարդկությանը դեպի կոմունիզմ տանող ուղին։

ПЕРВАЯ НАРОДНАЯ РЕВОЛЮЦИЯ ЭПОХИ ИМПЕРИАЛИЗМА

Доктор историч. наук А. Н. КАРАПЕТЯН

(Резюме)

В статье в свете постановления ЦК КПСС о 70-летии первой русской революции дается общая характеристика революции 1905—1907 гг. как первой народной революции эпохи империализма. Вождем народных масс в ходе революции выступала партия большевиков во главе с В. И. Лениным. Под руководством большевистских организаций в общенародную борьбу против самодержавия вовлекались также и широкие слои населения Армении. С экономическими и политическими тре-

бованиями выступали не только рабочие алавердских и кафанских медных рудников и заводов, железнодорожных станций, рабочие ереванского винно-коньячного, кожевенного заводов, но и трудящиеся более мелких предприятий—кузнечных, слесарных и других мастерских, наемные рабочие учреждений сферы обслуживания.

В статье говорится об укреплении в годы революции большевистских организаций Армении и усилении их деятельности, в которой руководящую роль играли видные деятели партии С. Г. Шаумян, С. С. Спандарян, С. И. Касьян, М. Г. Меликян, Г. Н. Соколовский, А. С. Кахоян и др. Раскрывается роль армянской большевистской печати как коллективного пропагандиста и организатора масс в ходе революции.